

ՆԱԽԱՐԱՐՎԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՅՏԱՐԱՐՎՈՐԵՐ

Առավել թույլ զարգացած երկրներին օգտին միջոցների մասին որոշում

Նախարարները,

ընթացում առավել առավել թույլ զարգացած երկրների կացությունը և համաշխարհային առևտրի համակարգում նրանց արդյունավետ մասնակցությունն ապահովելու և նրանց առևտրային հնարավորությունների բարելավմանն ուղղված հետագա միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը,

ընդունելով առավել թույլ զարգացած երկրների առանձնահատուկ կարիքները շուկայի մուտքի բնագավառում, որտեղ շարունակական արտոնյալ մուտքը մնում է որպես նրանց առևտրային հնարավորությունները բարելավելու կարևոր միջոց,

վերահաստատելով իրենց պարտավորվածությունը՝ ամբողջությամբ իրականացնելու առավել թույլ զարգացած երկրների վերաբերյալ դրույթները, որոնք ընդգրկված են 1979թ. նոյեմբերի 28-ի Տարբերակված և առավել բարենպաստ մոտեցման, փոխադարձության և զարգացող երկրների առավել լիակատար մասնակցության մասին որոշման 2«դ», 6-րդ և 8-րդ կետերի մեջ,

հաշվի առնելով մասնակիցների պարտավորությունները, որոնք սահմանված են Պունտա դել Էսթեի Նախարարական հայտարարագրի I Բաժնի Բ(vii) Գլխում,

1. Որոշում են, որ Ուրուգվայի փուլի ընթացքում բանակցված փաստաթղթերում դեռևս նախատեսված չլինելու դեպքում, առավել թույլ զարգացած երկրներից՝ անկախ այն բանից՝ նրանք ընդունել են այդ փաստաթղթերը, թե ոչ, և այնքան ժամանակ, քանի դեռ նրանք այդ դասակարգման տակ են, կպահանջվի միայն պարտավորություններ ստանձնել ու զիջումներ կատարել այն չափով, որ համապատասխանում է նրանց առանձին զարգացման, ֆինանսական և առևտրային կարիքներին կամ նրանց վարչական և սահմանակարգային կարողություններին՝ պահպանելով վերոհիշյալ փաստաթղթերով սահմանված ընդհանուր կանոնները: Թույլ զարգացած երկրներին մեկ տարի լրացուցիչ ժամանակ է տրվում՝ 1994թ. ապրիլի 15-ից, ներկայացնելու իրենց ժամանակացանկերը, որոնք պահանջվում են Առևտրի համաշխարհային կազմակերպության ստեղծման մասին համաձայնագրի XI Հոդվածով:

2. Համաձայնում են, որ.

- (i) Հօգուտ առավել թույլ զարգացած երկրների ձեռնարկված բոլոր հատուկ և տարբերակված միջոցների արագացված իրականացումը, ներառյալ՝ Ուրուգվայի փուլի շրջանակներում ձեռնարկվածներինը, երաշխավորվում է, այլոց թվում, պարբերական վերաքննությունների միջոցով:
- (ii) Հնարավորության սահմաններում, Ուրուգվայի փուլում համաձայնեցված մաքսային և ոչ մաքսային միջոցներին վերաբերող ԱԱԲ զիջումները՝ առավել թույլ զարգացած երկրների համար արտահանման առումով հետաքրքրություն ներկայացնող ապրանքների մասով կարող են կիրառվել ինքնուստիճյան, նախօրոք և առանց փուլերի: Ուշադրություն պետք է դարձվի ԱՐՀ-ի (GSP) և առավել թույլ զարգացած երկրների համար արտահանման առումով հատուկ հետաքրքրություն ներկայացնող ապրանքների մասով այլ համակարգերի հետագա բարելավման վրա:
- (iii) Տարբեր համաձայնագրերում և փաստաթղթերում և Ուրուգվայի փուլի անցումային ժամկետների վերաբերյալ դրույթներում նշված կանոնները կիրառվում են առավել թույլ զարգացած երկրների համար ճկուն և օժանդակող ձևով: Այս առումով, համակրական վերաբերմունք է ցույց տրվում՝ համապատասխան էտրոհություններում և Հանձնախմբերում առավել թույլ զարգացած երկրների կողմից բարձրացված առանձնահատուկ և հիմնավորված մտահոգությունների նկատմամբ:
- (iv) Ներմուծման վերականգնման միջոցների և ՄԱԳՀ-1947-ի XXXVII Հոդվածի 3«գ» կետում նշված միջոցների և ՄԱԳՀ-1994-ի համապատասխան դրույթի կիրառման ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվում առավել թույլ զարգացած երկրների համար հետաքրքրություն ներկայացնող արտահանումների վրա:
- (v) Էականորեն ավելացվում է առավել թույլ զարգացած երկրներին՝ նրանց զարգացման, արտադրության և արտահանման, ներառյալ՝ ծառայություններ մասով, հիմքերի ամրապնդման և բազմազանեցման, ինչպես նաև առևտրի խթանման համար տրամադրվող տեխնիկական

աջակցությունը՝ հնարավորություն տալու նրանց առավելագույնի հասցնելու շուկաների ազատականացված մատչելիության օգուտները:

3. Համաձայնում են վերաքննման տակ պահել առավել թույլ զարգացած երկրների կարիքները և շարունակել դրական միջոցների ընդունումը, որոնք նպաստում են առևտրային հնարավորությունների ընդլայնմանը՝ հօգուտ այդ երկրների:

Հայտարարագիր համաշխարհային քաղաքականության մշակման առումով ավելի մեծ համաձայնեցվածության հասնելու գործում Առևտրի համաշխարհային կազմակերպության ներդրման մասին

1. Անդամներն ընդունում են, որ համաշխարհային տնտեսության համաշխարհայնացումը բերել է առանձին երկրների կողմից վարվող տնտեսական քաղաքականությունների միջև անընդհատ մեծացող փոխազդեցությունների, ներառյալ՝ տնտեսական քաղաքականության մշակման կառուցվածքային, մակրոտնտեսական, առևտրային, ֆինանսական և զարգացման բնագավառների միջև եղած փոխազդեցությունները: Այս քաղաքականությունների միջև ներդաշնակության ձեռքբերման խնդիրն ընկնում է նախ՝ կառավարությունների վրա՝ ազգային մակարդակով, սակայն դրանց միջազգային համաձայնեցվածությունը կարևոր և արժեքավոր տարր է՝ ազգային մակարդակով այդ քաղաքականությունների արդյունավետությունը բարձրացնելու գործում: Ուրուգվայի փուլում ձեռքբերված Համաձայնագրերը ցույց են տալիս, որ բոլոր մասնակից կառավարություններն ըմբռնում են այն ներդրումը, որ ազատական առևտրային քաղաքականությունները կարող են կատարել իրենց սեփական տնտեսությունների և որպես ամբողջություն՝ համաշխարհային տնտեսության առողջ աճի և զարգացման գործում:

2. Տնտեսական քաղաքականության յուրաքանչյուր ոլորտում հաջող համագործակցությունը նպաստում է այլ ոլորտներում առաջընթացին: Տարադրամի փոխարժեքի առավել կայունությունը, որ հիմնված է առավել կանոնավորված տնտեսական և ֆինանսական պայմանների վրա, պետք է նպաստի առևտրի ընդլայնմանը, կայուն աճին և զարգացմանը, և արտաքին անհավասարակշռությունների շտկմանը: Տնտեսական աճ ու զարգացում ապահովելու օգնելու համար կարիք կա նաև դեպի զարգացող երկրներ զիջումային և ոչ-զիջումային ֆինանսական և իրական ներդրումային միջոցների բավարար և յուրաժամանակ հոսքի, և պարտքերի խնդիրների շտմանն ուղղված աշխատանքների: Առևտրի ազատականացումը մեծաթիվ երկրների կողմից ձեռնարկվող՝ հաճախ նշանակալի անցումային հասարակական ծախսեր ընդգրկող կարգավորման ծրագրերի հաջողության ավելի ու ավելի մեծ կարևորություն ունեցող բաղադրիչ է: Այս կապակցությամբ նախարարները հատկանշում են Համաշխարհային դրամատան և ԱՄՅ-ի դերը՝ առևտրի ազատականացմանը համապատասխան կարգավորմանը օժանդակելու հարցում, ներառյալ՝ օժանդակությունը սննդամթերքի զուտ ներմուծող զարգացող երկրներին, որոնք ունենում են գյուղատնտեսական առևտրի բարեփոխումների արդյունքում ծագող կարճաժամկետ ծախսեր:

3. Ուրուգվայի փուլի դրական արդյունքը կարևոր ներդրում է ավելի համաձայնեցված ու փոխլրացնող միջազգային տնտեսական քաղաքականությունների վարման ուղղությամբ: Ուրուգվայի փուլի արդյունքները երաշխավորում են շուկայի մատչելիության ընդլայնումը՝ հօգուտ բոլոր երկրների, ինչպես նաև կառուցվածք են ապահովում առևտրի ամրապնդված բազմակողմ հիմնադրույթների համար: Դրանք նաև երաշխավորում են, որ առևտրային քաղաքականությունը կվարվի ավելի թափանցիկ ձևով և ներքին մրցունակության համար բաց առևտրային միջավայրի տված օգուտների առավել ըմբռնումով: Ուրուգվայի փուլից սկիզբ առնող առևտրի բազմակողմ համակարգը կարողություն ունի ազատականացման համար բարելավված հավաքատեղի ապահովելու, նպաստելու ավելի արդյունավետ հսկողությամբ և երաշխավորելու բազմակողմ կերպով համաձայնեցված կանոնների և հիմնադրույթների խիստ պահպանումը: Այս բարելավումները նշանակում են, որ առևտրային քաղաքականությունը ապագայում կարող է ավելի էական դեր կատարել՝ համաշխարհային տնտեսական քաղաքականության մշակման համաձայնեցվածությունն ապահովելու հարցում:

4. Նախարարներն ընդունում են, սակայն, որ այն դժվարությունները, որոնց ակունքները առևտրի ոլորտից դուրս են, չեն կարող կարգավորվել միայն առևտրի ոլորտում ձեռնարկված միջոցներով: Սա ընդգծում է համաշխարհային տնտեսական քաղաքականության մշակման այլ տարրերի բարելավմանն ուղղված

ջանքերի կարևորությունը Ուրուզվայի փուլում ձեռքբերված արդյունքների արդյունավետ իրականացմանը լրացնելու համար:

5. Տնտեսական քաղաքականության տարբեր բնագավառների միջև փոխադարձ կապակցվածությունը պահանջում է, որ այս բնագավառներից յուրաքանչյուրում պատասխանատվություն ունեցող միջազգային հաստատությունները իրականացնեն համաձայնեցված ու միմյանց փոխադարձաբար օժանդակող քաղաքականություններ: Այդուհանդերձ, Առևտրի համաշխարհային կազմակերպությունը պետք է ձգտի փողի և ֆինանսական հարցերի մասով պատասխանատու միջազգային հաստատությունների հետ համագործակցության և զարգացնի այն՝ միաժամանակ, հարգելով յուրաքանչյուր հաստատության իրավասությունը, գաղտնիության պահանջները և անհրաժեշտ ինքնուրույնությունը որոշում կայացնելու ընթացակարգերում և խուսափելով կառավարությունների վրա խաչվող պայմանականություններ կամ լրացուցիչ պայմաններ դնելուց: Նախարարները այսուհետև ԱՀԿ Գլխավոր տնօրենին հրավիրում են Արժույթի միջազգային հիմնադրամի Ղեկավար-տնօրենի և Համաշխարհային դրամատան Նախագահի հետ վերաքննելու ԱՀԿ պատասխանատվության մշակությունները Բրետոն Վուդզի հաստատությունների հետ համագործակցության մասով, ինչպես նաև այն ձևերը, որ այդ համագործակցությունը կարող է ունենալ՝ նպատակ ունենալով համաշխարհային քաղաքականության մշակման հարցում ավելի մեծ համաձայնեցվածության հասնելու:

Ծանուցման ընթացակարգերի մասին որոշում

Նախարարները

որոշում են Նախարարական համաժողովին առաջարկել՝ որոշում ընդունել ծանուցման ներքոշարադրյալ ընթացակարգերի բարելավման և վերաքննության մասին:

Անդամները,

ցանկանալով բարելավել Առևտրի համաշխարհային կազմակերպության ստեղծման մասին համաձայնագրով (այսուհետև հիշատակվում է որպես ԱՀԿ համաձայնագիր) սահմանված ծանուցման ընթացակարգերի գործողությունը և դրանով նպաստել Անդամների առևտրային քաղաքականությունների թափանցիկությանը և այդ առնչությամբ հաստատված հսկողության վերաբերյալ համաձայնությունների արդյունավետությանը,

վկայակոչելով ԱՀԿ համաձայնագրով սահմանված՝ հրապարակելու և ծանուցելու պարտավորությունները, ներառյալ՝ անդամակցության առանձին արձանագրությունների պայմաններով, ազատումներով և այլ համաձայնագրերով, որոնց միացել են Անդամները, ստանձնված պարտավորությունները,

համաձայնում են հետևյալի մասին.

I. Ծանուցելու ընդհանուր պարտավորություն

Անդամները հաստատում են իրենց հավատարմությունը՝ Առևտրի բազմակողմ-պարտադիր համաձայնագրերով և, կիառելիության դեպքում, Առևտրի բազմակողմ-կամավոր համաձայնագրերով սահմանված՝ հրապարակման և ծանուցման վերաբերյալ պարտավորություններին:

Անդամները վկայակոչում են 1979թ. նոյեմբերի 28-ին ընդունված՝ Ծանուցումների, խորհրդակցությունների, վեճերի կարգավորման ու վերահսկողության վերաբերյալ փոխհամաձայնության (BISD 26S/210) մեջ նշված իրենց հանձնառությունները: Անդամները դրանում եղած իրենց հանձնառության կապակցությամբ, ըստ որի՝ առավելագույն հնարավորության չափով պետք է ծանուցեն իրենց ընդունած այն միջոցների մասին, որոնք ազդեցություն ունեն ՄԱԳՀ-1994-ի գործողության վրա՝ առանց այդպիսի ծանուցումներով վնաս հասցնելու Առևտրի բազմակողմ-պարտադիր համաձայնագրերով և, կիառելիության դեպքում, Առևտրի բազմակողմ-կամավոր համաձայնագրերով սահմանված իրավունքների և պարտավորությունների հետ միջոցների համապատասխանության կամ առնչության մասին տեսակետներին, համաձայնում են անհրաժեշտության դեպքում ուղղորդվել միջոցառումների կցված ցանկով: Անդամներն այդուհանդերձ համաձայնում են, որ այդպիսի միջոցների ներդրումը կամ փոփոխումը ենթակա է 1979թ. Փոխհամաձայնության ծանուցման պահանջներին:

II. Ծանուցումների կենտրոնացված գրանցատուն

Քարտուղարության պատասխանատվության շրջանակներում ստեղծվում է ծանուցումների կենտրոնացված գրանցատուն: Մինչ Անդամները կշարունակեն հետևել ծանուցման գոյություն ունեցող ընթացակարգերին, Քարտուղարությունը ապահովում է, որ կենտրոնական գրանցատունը գրանցի խնդրո առարկա Անդամի կողմից միջոցի վերաբերյալ տրամադրված տեղեկատվության այն տարրերը, ինչպիսիք են նրա նպատակը, նրա առևտրային ընդգրկումը և այն պահանջը, ըստ որի կատարվել է ծանուցումը:

Կենտրոնական գրանցատունը տարին մեկ յուրաքանչյուր Անդամի տեղեկացում է պարբերական ծանուցման այն պարտավորությունների մասին, որոնք այդ Անդամը պետք է կատարի հաջորդող տարվա ընթացքում:

Կենտրոնական գրանցատունը առանձին Անդամների ուշադրությունը հրավիրում է պարբերական ծանուցման այն պահանջների վրա, որոնք դեռ չեն կատարվել:

Առանձին ծանուցումների վերաբերյալ կենտրոնական գրանցատունը եղած տեղեկությունները, պահանջ լինելու դեպքում, մատչելի են դարձվում ցանկացած Անդամի համար, որը իրավունք ունի ստանալու տվյալ ծանուցումը:

III. Ծանուցման պարտավորությունների և ընթացակարգերի վերաքննություն

Ապրանքների առևտրի խորհուրդը կձեռնարկի ԱՅԿ համաձայնագրի 1Ա Հավելվածով սահմանված ծանուցման պարտավորությունների և ընթացակարգերի վերաքննություն: Վերաքննությունը կանցկացվի աշխատանքային խմբի կողմից, որին անդամակցելը ազատ կլինի բոլոր Անդամների համար: Խումբը կստեղծվի ԱՅԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից անմիջապես հետո:

Աշխատանքային խումբը կունենա գործունեության հետևյալ նկարագիրը.

- ձեռնարկել Անդամների՝ ԱՅԿ համաձայնագրի 1Ա Հավելվածով սահմանված ծանուցման բոլոր գոյություն ունեցող պարտավորությունների մանրամասն վերաքննություն՝ նպատակ ունենալով հնարավոր առավելագույն չափով պարզեցնել, օրինաչափ դարձնել և միասնականացնել այդ պարտավորությունները, ինչպես նաև բարելավել համապատասխանությունը այդ պարտավորություններին հաշվի առնելով Անդամների տնտեսական քաղաքականությունների թափանցիկությունը և այդ առնչությամբ հաստատված վերահսկման վերաբերյալ համաձայնությունների արդյունավետությունը բարելավելու ընդհանուր նպատակը, և հաշվի առնելով նաև, որ իրենց ծանուցման պարտավորությունները կատարելու համար որոշ զարգացող Անդամ երկրներ աջակցության կարիք կունենան.
- ոչ ուշ, քան ԱՅԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց երկու տարի հետո առաջարկություններ ներկայացնել Արանքների առևտրի խորհուրդին:

ՀԱՎԵԼՎԱԾ

ԾԱՆՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՆՇԱԿԱՆ ՑԱՆԿ¹

Մաքսեր (ներառյալ ամրագրումների ընդգրկումն ու շրջանակները, ԱԸՀ (GSP) դրույթները, ազատ առևտրի գոտիների (մաքսային միությունների) անդամների նկատմամբ կիրառվող դրույթաչափերը, այլ արտոնություններ).

Սակագնային քվոտաները և լրացուցիչ գանձումները.

Քանակական սահմանափակումները, ներառյալ՝ ներմուծումների վրա ազդող արտահանման կամավոր սահմանափակումները և շուկայահանումը կանոնավորող համաձայնությունները.

Այլ ոչ մաքսային միջոցներ, ինչպիսիք են լիցենզավորումը և ցուցակցման պահանջները, տարբերակված գանձումները.

Մաքսային արժեքի գնահատում.

Ծագման կանոններ.

Պետական գնումներ.

Տեխնիկական խոչընդոտներ.

Պաշտպանական գործողություններ.

Հակազնագցման գործողություններ.

Փոխհատուցման գործողություններ.

Արտահանման հարկեր.

Արտահանման լրավճարներ, հարկային արտոնություններ և արտահանման զիջումային ֆինանսավորում.

Ազատ առևտրի գոտիներ, ներառյալ՝ չնաքսազերծված արտադրությունը.

Արտահանման սահմանափակումներ, ներառյալ՝ արտահանման կամավոր սահմանափակումները և շուկայահանումը կանոնավորող համաձայնությունները.

Կառավարական այլ տեսակի օժանդակություն, ներառյալ՝ լրավճարներն ու հարկային արտոնությունները.

Պետական առևտրային ընկերությունների դերը.

¹ Սույն ցանկով չեն փոփոխվում գոյություն ունեցող՝ ԱՀԿ համաձայնագրի 1ԱՀավելվածի առևտրի բազմակողմ-պարտադիր համաձայնագրերում կամ, կիրառելության դեպքում, ԱՀԿ համաձայնագրի 4-րդ Հավելվածի առևտրի բազմակողմ-կամավոր համաձայնագրերում ընդգրկված ծանուցման պահանջները:

Արտարժույթի վերահսկումը՝ կապված ներմուծման և արտահանման հետ.

Կառավարության կողմից հանձնարարված հանդիպական առևտուրը.

ԱՀԿ համաձայնագրի 1Ա Հավելվածի Առևտրի բազմակողմ-պարտադիր համաձայնագրերում ընդգրկված ցանկացած այլ միջոց:

Հայտարարագիր Արժույթի միջազգային հիմնադրամի հետ Առևտրի համաշխարհային կազմակերպության հարաբերության մասին

Նախարարները,

նկատի առնելով ՄԱԳՀ-1947-ի ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎՈՂ ԿՈՂՄԵՐԻ և Արժույթի միջազգային հիմնադրամի միջև եղած մոտ հարաբերությունը և ՄԱԳՀ-1947-ի՝ այդ հարաբերությունը ղեկավարող դրույթները, մասնավորապես ՄԱԳՀ 1947-ի XV Հոդվածը,

ըմբռնելով մասնակիցների ցանկությունը՝ Արժույթի միջազգային հիմնադրամի հետ ԱՀԿ-ն հարաբերությունը՝ ԱՀԿ համաձայնագրի 1Ա Հավելվածի Առևտրի բազմակողմ-պարտադիր համաձայնագրերով պարփակված բնագավառների մասով հիմնելու այն դրույթների վրա, որոնք ղեկավարել են ՄԱԳՀ-1947-ի ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎՈՂ ԿՈՂՄԵՐԻ հարաբերությունը Արժույթի միջազգային հիմնադրամի հետ,

սույնով վերահաստատում են, որ Արժույթի միջազգային հիմնադրամի հետ ԱՀԿ-ն հարաբերությունը՝ ԱՀԿ համաձայնագրի 1Ա Հավելվածի Առևտրի բազմակողմ-պարտադիր համաձայնագրերով պարփակված բնագավառների մասով կհիմնվեն այն դրույթների վրա, որոնք ղեկավարել են ՄԱԳՀ-1947-ի ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎՈՂ ԿՈՂՄԵՐԻ հարաբերությունը Արժույթի միջազգային հիմնադրամի հետ, եթե այլ կերպ չի նախատեսված եզրափակիչ փաստաթղթում:

Որոշում առավել թույլ զարգացած և սննդամթերք զուտ ներմուծող զարգացող երկրների վրա Բարեփոխումների ծրագրի հնարավոր բացասական ազդեցություններին վերաբերող միջոցների մասին

1. Նախարարներն ընդունում են, որ Ուրուգվայի փուլի արդյունքների՝ որպես ամբողջության առաջընթաց իրականացումը կստեղծի տնտեսական աճի և առևտրի ընդլայնման ավելի ու ավելի մեծ հնարավորություններ՝ հօգուտ բոլոր մասնակիցների:

2. Նախարարներն ընդունում են, որ գյուղատնտեսական առևտրի ազատականացմանը տանող բարեփոխումների ծրագրի ընթացքում առավել թույլ զարգացած երկրները և սննդամթերք զուտ ներմուծող զարգացող երկրները կարող են բացասական ազդեցությունների ենթարկվել՝ արտաքին աղբյուրներից խելամիտ պայմաններով հիմնական սննդամթերքի բավարար մատակարարումների մատչելիության առումով, ներառյալ՝ հիմնական սննդամթերքի առևտրային ներմուծումների սովորական

մակարդակը դրամավորելու գործում կարճաժամկետ դժվարությունները:

3. Նախարարները համապատասխանաբար համաձայնում են համապատասխան գործակառույցներ ստեղծել՝ երաշխավորելու, որ գյուղատնտեսական առևտրի մասով Ուրուգվայի փուլի արդյունքների իրականացումը վնասակար ազդեցություն չունենա զարգացող երկրների, հատկապես, առավել թույլ զարգացած երկրների և սննդամթերք զուտ ներմուծող զարգացող երկրների սննդի կարիքները հոգալուն ուղղված աջակցություն տրամադրելու համար բավարար պարենային օգնության մատչելիության վրա: Այս կապակցությամբ նախարարները համաձայնում են.

- (i) վերանայել պարենային օգնության մակարդակը, որ պարբերաբար սահմանվում է Պարենային օգնության հանձնախմբի կողմից՝ համաձայն 1986թ. Պարենային օգնության կոնվենցիայի, և համապատասխան հավաքատեղում նախաձեռնել բանակցություններ՝ բարեփոխումների ծրագրի ընթացքում զարգացող երկրների սննդի օրինավոր կարիքները հոգալու համար բավարար պարենային օգնության պարտավորությունների մակարդակը սահմանելու նպատակով.
- (ii) ընդունել կանոններ՝ ապահովելու համար, որ առավել թույլ զարգացած երկրներին և սննդամթերք զուտ ներմուծող զարգացող երկրներին՝ հիմնական սննդամթերքի ավելի ու ավելի աճող չափաբաժինը ամբողջությամբ տրամադրվի նվիրատվության ձևով և(կամ) համապատասխան զիջումային պայմաններով՝ համաձայն 1986թ. Պարենային օգնության կոնվենցիայի IV Յոդվածի.
- (iii) իրենց օգնության ծրագրերում լիարժեքորեն հաշվի առնել առավել թույլ զարգացած երկրներին և սննդամթերք զուտ ներմուծող զարգացող երկրներին՝ նրանց գյուղատնտեսական արտադրողականության և ենթակառուցվածքների բարելավման համար տեխնիկական և ֆինանսական աջակցություն տրամադրելու պահանջներին:

4. Նախարարները այնուհետև համաձայնում են երաշխավորել, որ գյուղատնտեսական արտահանման վարկավորմանն առնչվող ցանկացած համաձայնագիր համապատասխան դրույթներ նախատեսի առավել թույլ զարգացած երկրների և սննդամթերք զուտ ներմուծող զարգացող երկրների նկատմամբ տարբերակված մոտեցման համար:

5. Նախարարներն ըմբռնում են, որ Ուրուգվայի փուլի արդյունքում որոշ զարգացող երկրներ կարող են առևտրային ներմուծումների սովորական մակարդակը ֆինանսավորելու գործում կարճաժամկետ դժվարություններ ունենալ, և որ այդ ֆինանսական դժվարությունները հաղթահարելու համար այդ երկրները կարող են՝ գոյություն ունեցող հնարավորությունների կամ այն հնարավորությունների շրջանակներում, որ կարող են ստեղծվել կարգավորման ծրագրերի ներքո, իրավունք ունենալ օգտվելու միջազգային ֆինանսական հաստատությունների միջոցներից: Այս կապակցությամբ նախարարները նկատի են առնում ՄԱԳՅ-1947-ի ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎՈՂ ԿՈՂՄԵՐԻ Գլխավոր տնօրենի՝ Արժույթի միջազգային հիմնադրամի Ղեկավար-տնօրենի և Յամաշարիային դրամատան Նախագահի հետ իր ունեցած խորհրդակցությունների վերաբերյալ զեկուցագրի կետ 37-ը (MTN.GNG/NG14/W/35):

6. Սույն Որոշման դրույթները ենթակա են Նախարարական համաժողովի կողմից պարբերական վերաքննության, և սույն Որոշման հետագա կատարումը, անհրաժեշտության դեպքում, դիտանցվում է Գյուղատնտեսության հանձնախմբի կողմից:

Մանածագործվածքների և հագուստեղենի մասին համաձայնագրի Յոդված 2.6-ով սահմանված առաջին ընդգրկմանը վերաբերող ծանուցման մասին որոշում

Նախարարները՝

Համաձայնում են, որ այն մասնակիցները, որոնք պահպանում են Մանածագործվածքների և հագուստեղենի մասին համաձայնագրի 2-րդ Յոդվածի 1-ին կետի տակ ընկնող սահմանափակումներ, ոչ ուշ, քան 1994թ. հոկտեմբերի 1-ը ՄԱԳՅ Քարտուղարությանը ծանուցում են այդ Համաձայնագրի 2-րդ Յոդվածի 6-րդ կետի համաձայն ձեռնարկված գործողությունների վերաբերյալ լրիվ մանրամասների մասին: Տեղեկատվության նպատակով ՄԱԳՅ Քարտուղարությունը այդ ծանուցումները շտապ տրամադրում է մյուս մասնակիցներին: Այդ ծանուցումները Մանածագործվածքների և հագուստեղենի մասին համաձայնագրի 2-րդ Յոդվածի 21-րդ կետի նպատակներով մատչելի կդարձվեն

Մանածագործվածքների հարցերով դիտանցման մարմնի համար, երբ այն կստեղծվի:

ԱՅԿ-ՅԱԿ Համօրինակների (ստանդարտների) տեղեկատվական համակարգի առնչությամբ առաջարկված փոխհամաձայնության մասին որոշում

Նախարարները

որոշում են առաջարկել, որ Առևտրի համաշխարհային կազմակերպության Քարտուղարությունը փոխհամաձայնություն ձեռք բերի Համօրինակման (համօրինակացման) միջազգային կազմակերպության (ՅԱԿ) հետ՝ ստեղծելու տեղեկատվական կենտրոն, որի ներքո.

1. ՅԱԿ-ՑԱՆՑԻ-ի (ISONET) անդամները՝ ՅԱԿ-ԷՄՅ-ի (ISO/IEC) ժնկի Տեղեկատվական կենտրոնին են փոխանցում Առևտրի տեխնիկական խոչընդոտների մասին համաձայնագրի Հավելված 3-ի Համօրինակների պատրաստման, ընդունման և կիրառման բարեխիղճ գործելակերպի կանոնադրության «Գ» և «Ժ» կետերում նշված ծանուցումները՝ այնտեղ մատնանշված ձևով.
2. «Ժ» կետում նշված աշխատանքային ծրագրերում գործածվում են հետևյալ (ալֆա)թվային դասակարգման համակարգերը.
 - ա) համօրինակների դասակարգման համակարգ, որը համօրինակացման մարմիններին թույլ կտա աշխատանքային ծրագրում նշված յուրաքանչյուր համօրինակի համար տրամադրել տվյալ առարկայի (ալֆա)թվային հատկանշում.
 - բ) փուլային ծածկագրման համակարգ, որը համօրինակման մարմիններին թույլ կտա աշխատանքային ծրագրում նշված յուրաքանչյուր համօրինակի համար տրամադրել տվյալ համօրինակի մշակման փուլի (ալֆա) թվային հատկանշում: Այս նպատակով պետք է տարբերակվեն առնվազն հինգ մշակման փուլեր. 1) փուլ, որում համօրինակ մշակելու որոշումը կայացվել է, սակայն տեխնիկական աշխատանք դեռ չի կատարվել, 2) փուլ, որում տեխնիկական աշխատանքը սկսվել է, սակայն դեռ չի սկսվել դիտողությունների ներկայացման ժամկետը, 3) փուլ, որում դիտողությունների ներկայացման ժամկետը սկսվել է, սակայն դեռ չի ավարտվել, 4) փուլ, որում դիտողությունների ներկայացման ժամկետն ավարտվել է, սակայն համօրինակը դեռ չի ընդունվել, 5) փուլ, որում համօրինակն ընդունվել է.
 - գ) բոլոր միջազգային համօրինակներն ընդգրկող հատկորոշման համակարգ, որը համօրինակման մարմիններին թույլ կտա աշխատանքային ծրագրում նշված յուրաքանչյուր համօրինակի համար տրամադրել որպես հիմք օգտագործված միջազգային համօրինակի(ների) (ալֆա) թվային հատկանշում:
3. ՅԱԿ-ԷՄՅ-ի Տեղեկատվական կենտրոնը շտապ Քարտուղարությանն է տրամադրում բարեխիղճ գործելակերպի կանոնադրության «Գ» կետում նշված ցանկացած ծանուցման պատճենը:
4. ՅԱԿ-ԷՄՅ-ի Տեղեկատվական կենտրոնը պարբերաբար հրատարակում է բարեխիղճ գործելակերպի կանոնադրության «Գ» և «Ժ» կետերի համաձայն իրեն ներկայացված ծանուցումներում եղած տեղեկությունները. այս հրատարակումը, որի համար կարող է խելամիտ վճար գանձվել, մատչելի է ՅԱԿ-ՑԱՆՑԻ անդամների և, Քարտուղարության միջոցով, ԱՅԿ Անդամների համար:

ՅԱԿ-ԷՄՅ տեղեկատվական կենտրոնի հրատարակման վերանայման մասին որոշում

Նախարարները

որոշում են, որ Առևտրի համաշխարհային կազմակերպության ստեղծման մասին համաձայնագրի 1Ա Հավելվածի Առևտրի տեխնիկական խոչընդոտների մասին համաձայնագրի 13-րդ Հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դրա ներքո ստեղծված Առևտրի տեխնիկական խոչընդոտների հարցերով հանձնախումբը, առանց վնաս հասցնելու խորհրդակցությունների և վեճերի կարգավորման վերաբերյալ դրույթներին, առնվազն տարին մեկ անգամ վերանայում է ՅԱԿ-ԷՄՅ տեղեկատվական կենտրոնի տրամադրած՝ Համաձայնագրի 3-րդ Հավելվածի Համօրինակների պատրաստման, ընդունման և կիրառման բարեխիղճ

գործելակերպի կանոնադրությանը համապատասխան ստացված տեղեկությունների վերաբերյալ հրատարակությունը՝ նպատակ ունենալով Անդամներին հնարավորություն տալ քննարկելու այդ կարգի գործողությանն առնչվող ցանկացած հարց:

Այս քննարկումը խթանելու համար Քարտուղարությունը ըստ Անդամների տրամադրում է համօրինակման այն բոլոր մարմինների ցանկը, որոնք ընդունել են կարգը, ինչպես նաև այն համօրինակացման մարմինների ցանկը, որոնք ընդունել են կարգը կամ հրաժարվել են դրանից նախորդող վերանայումից հետո:

Քարտուղարությունը շտապ Անդամներին է բաժանում նաև այն ծանուցումների պատճենները, որոնք նա ստանում է ՀՄԿ-ԷՄՀ տեղեկատվական կենտրոնից:

Հակախափանման մասին որոշում

Նախարարները,

նկատի առնելով, որ չնայած հակազնագցման միջոցների խափանման (շրջանցման) խնդիրը ՄԱԳՀ-1994-ի VI Հոդվածի իրականացման մասին համաձայնագրին նախորդող բանակցությունների մաս էր, բանակցողները չկարողացան համաձայնության գալ որոշակի շարադրանքի շուրջը,

ըմբռնելով այս բնագավառում միասնական կանոնների հնարավորին չափ շուտ կիրառության ցանկալիությունը,

որոշում են այս հարցը ներկայացնել այդ համաձայնագրով ստեղծված Հակազնագցման գործունեության հարցերով հանձնախմբին՝ լուծելու համար:

Մաքսերի և առևտրի 1994թ. Գլխավոր Համաձայնագրի VI Հոդվածի իրականացման մասին համաձայնագրի Հոդված 17.6-ի վերանայման մասին որոշում

Նախարարները

որոշում են, որ.

ՄԱԳՀ-1994-ի VI Հոդվածի իրականացման մասին համաձայնագրի Հոդված 17-ի 6-րդ կետում ընդգրկված վերաքննության եղանակը վերանայվում է երեք տարի ժամանակահատված անցնելուց հետո՝ նպատակ ունենալով քննարկել այն հարցը, թե պիտանի է արդյոք այն ընդհանուր կիրառության համար:

Մաքսերի և առևտրի 1994թ. Գլխավոր Համաձայնագրի VI Հոդվածի իրականացման մասին համաձայնագրի և Լրավճարների և փոխհատուցման միջոցների մասին համաձայնագրի V Գլխի համաձայն վեճերի կարգավորման մասին հայտարարագիր

Նախարարները

ըմբռնում են հակազնագցման և փոխհատուցման միջոցների մասով ծագող վեճերի համաձայնեցված կարգավորման կարիքը՝ կապված ՄԱԳՀ-1994-ի VI Հոդվածի իրականացման մասին համաձայնագրի և Լրավճարների և փոխհատուցման միջոցների մասին համաձայնագրի V Գլխի հետ:

Որոշում այն դեպքերի առնչությամբ, երբ մաքսային մարմինները հիմքեր ունեն կասկածելու հայտարարագրված մաքսային արժեքի հավաստիության կամ ճշգրտության վրա

Նախարարները

ՄԱԳՅ-1994-ի VII Յոդվածի իրականացման մասին համաձայնագրով ստեղծված Մաքսային արժեքի գնահատման հարցերով հանձնախմբին կոչ են անում կայացնելու հետևյալ որոշումը.

Մաքսային արժեքի գնահատման հանձնախումբը,

վերահաստատելով, որ ՄԱԳՅ-1994-ի VII Յոդվածի իրականացման մասին համաձայնագրով (այսուհետև հիշատակվում է որպես «Համաձայնագիր») սահմանված արժեքի գնահատման առաջնային հիմք է գործարքի արժեքը,

ընդունելով, որ մաքսային մարմինն կարող է պետք լինել գործ ունենալու այնպիսի դեպքերի հետ, որտեղ նա հիմքեր ունի կասկածելու առևտրականների հայտարարագրած արժեքի հավաստման համար նրանց կողմից պատրաստված տվյալների կամ փաստաթղթերի հավաստիությանը կամ ճշգրտությանը,

չեշտելով, որ այդ անելիս մաքսային մարմինը չպետք է վնաս հասցնի առևտրականների օրինական առևտրային շահերին,

հաշվի առնելով Համաձայնագրի 17-րդ Յոդվածը, Համաձայնագրի III Հավելվածի 6-րդ կետը և Մաքսային արժեքի գնահատման հարցերով հանձնախմբի համապատասխան որոշումները,

որոշում է, որ.

1. Երբ հայտարարագիր է ներկայացվում, և երբ մաքսային մարմինը հիմքեր ունի կասկածելու հայտարարագրված արժեքի հավաստման համար պատրաստված տվյալների կամ փաստաթղթերի հավաստիությանը կամ ճշգրտությանը, մաքսային մարմինը կարող է ներմուծողից պահանջել հետագա բացատրություններ, ներառյալ՝ փաստաթղթեր կամ այլ ապացույցներ՝ առ այն, որ հայտարարագրված արժեքը ներկայացնում է ներմուծվող ապրանքների համար՝ 8-րդ Յոդվածի դրույթներին համապատասխան ճշգրտված, փաստացի վճարված կամ վճարման ենթակա ընդհանուր գումարը: Եթե հետագա տեղեկություններ ստանալուց հետո կամ պատասխան չլինելու դեպքում մաքսային մարմինը դեռևս հիմնավոր կասկածներ ունի հայտարարագրված արժեքի հավաստիության կամ ճշգրտության վերաբերյալ, ապա հաշվի առնելով 11-րդ Յոդվածի դրույթները՝ կարելի է համարել, որ ներմուծված ապրանքների մաքսային արժեքը չի կարող որոշվել 1-ին Յոդվածի դրույթներով: Վերջնական որոշում կայացնելուց առաջ, մաքսային մարմինը ներմուծողին հաղորդում է (պահանջ լինելու դեպքում գրավոր կերպով) պատրաստված տվյալների կամ փաստաթղթերի հավաստիությանը կամ ճշգրտությանը իր ունեցած կասկածների հիմքերի մասին, և ներմուծողին պատասխանելու պատշաճ հնարավորություն է տրվում: Վերջնական որոշում կայացնելու դեպքում մաքսային մարմինը ներմուծողին գրավոր կերպով հաղորդում է իր որոշման ու դրա հիմքերի մասին:

2. Համաձայնագիրը կիրարկելիս ամբողջությամբ ընդունելի է, որ մի Անդամը աջակցի մեկ այլ Անդամի՝ փոխադարձաբար համաձայնեցված պայմաններով:

Բացառիկ գործակալների, բացառիկ բաշխողների և բացառիկ արտոնատերերի կողմից կատարվող ներմուծումներին և նվազագույն արժեքներին առնչվող տեքստերի մասին որոշում

Նախարարները

որոշում են ՄԱԳՅ-1994-ի VII Յոդվածի իրականացման մասին համաձայնագրով ստեղծված Մաքսային արժեքի գնահատման հարցերով հանձնախմբին ներկայացնել հետևյալ տեքստերը՝ ընդունման համար.

I

Եթե զարգացող երկիրը վերապահում է անուն՝ III Հավելվածի 2-րդ կետի իմաստով պաշտոնապես սահմանված նվազագույն արժեքներ կիրառելու համար, ապա Հանձնախումբը աջակցող վերաբերմունք է ցույց տալիս վերապահում անելու պահանջի նկատմամբ:

Եթե վերապահումին համաձայնություն է տրվում, ապա III Հավելվածի 2-րդ կետում նշված պայմաններում պետք է լիարժեքորեն հաշվի առնվեն տվյալ զարգացող երկրի զարգացման, ֆինանսական և առևտրային կարիքները:

II

1. Մի շարք զարգացող երկրներ մտահոգություն ունեն, որ խնդիրներ կարող են լինել բացառիկ գործակալների, բացառիկ բաշխողների և բացառիկ արտոնատերերի կողմից կատարվող ներմուծումների արժեքի գնահատման գործում: Համաձայն 20-րդ Յոդվածի 1-ին կետի՝ զարգացող Անդամ երկրները հինգ

տարի հետաձգման ժամկետ ունեն մինչև Համաձայնագրի կիրառումը: Այս առումով՝ սույն դրույթից օգտվող զարգացող Անդամ երկրները կարող են ժամկետն օգտագործել համապատասխան ուսումնասիրություններ կատարելու և այնպիսի այլ միջոցներ ձեռնարկելու նպատակով, ինչպիսիք անհրաժեշտ են կիրառմանը նպաստելու համար:

2. Հաշվի առնելով այս՝ Հանձնախումբը առաջարկում է, որ Մաքսային համագործակցության խորհուրդն աջակցի զարգացող Անդամ երկրներին համաձայն II Հավելվածի դրույթների՝ հետազոտություններ ձևակերպելու և կատարելու այն բնագավառներում, որոնք հատկանշվում են որպես հնարավոր մտահոգության առարկա հադիսացող, ներառյալ՝ բացառիկ գործակալների, բացառիկ բաշխողների և բացառիկ արտոնատերերի կողմից կատարվող ներմուծումներին առնչվողները:

Ծառայությունների առևտրի գլխավոր համաձայնագրի մասով սահմանակարգային դրույթների մասին որոշում

Նախարարները

որոշում են առաջարկել, որ Ծառայությունների առևտրի խորհուրդն իր առաջին ժողովի ժամանակ ընդունի որոշում ներքոշարադրյալ օժանդակ մարմինների մասին:

Ծառայությունների առևտրի խորհուրդը՝

գործելով XXIV Հոդվածին համապատասխան, նպատակ ունենալով դյուրինացնելու Ծառայությունների առևտրի գլխավոր համաձայնագրի գործողությունը և նպաստելու նրա նպատակների իրականացմանը,

որոշում է, որ.

1. Ցանկացած օժանդակ մարմին, որ կարող է ստեղծվել խորհրդի կողմից, զեկուցում է խորհրդին տարին մեկ անգամ կամ, անհրաժեշտության դեպքում, ավելի հաճախ: Յուրաքանչյուր այդպիսի մարմին ստեղծում է իր սեփական ընթացակարգերի կանոնները և, անհրաժեշտության դեպքում, կարող է ստեղծել իր սեփական օժանդակ մարմինները:

2. Ցանկացած ոլորտի հանձնախումբ կատարում է խորհրդի կողմից իրեն հանձնարարված պարտականությունները և Անդամներին հնարավորություն է տալիս խորհրդակցելու տվյալ ոլորտի ծառայությունների առևտրի հետ կապված ցանկացած հարցի և ոլորտի այն հավելվածի գործողության վերաբերյալ, որին դա կարող է առնչվել: Այդ պարտականություններն ընդգրկում են.

- ա) շարունակական վերաքննության ու հսկողության տակ պահել Համաձայնագրի կիրառությունը տվյալ ոլորտի մասով,
- բ) խորհրդի կողմից քննարկման համար մշակել առաջարկություններ և հանձնարարականներ՝ տվյալ ոլորտի առևտրի հետ կապված ցանկացած հարցի վերաբերյալ,
- գ) եթե գոյություն ունի տվյալ ոլորտին առնչվող հավելված, ապա քննարկել այդ ոլորտի հավելվածի փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունները և համապատասխան հանձնարարականներ ներկայացնել խորհրդին,
- դ) հավաքատեղի ապահովել տեխնիկական բնույթի քննարկումների համար, ուսումնասիրել Անդամների կիրառած միջոցները և քննության առնել տվյալ ոլորտում ծառայությունների առևտրի վրա ազդեցություն ունեցող ցանկացած այլ տեխնիկական հարց,
- ե) պարտավորությունների իրականացման և տվյալ ոլորտում ծառայությունների առևտրի վրա ազդեցություն ունեցող այլ հարցերի հետ կապված՝ տեխնիկական աջակցություն տրամադրել զարգացող Անդամ երկրներին և այն զարգացող երկրներին, որոնք Առևտրի համաշխարհային կազմակերպության ստեղծման մասին համաձայնագրին անդամակցելու բանակցություններ են վարում,
- զ) համագործակցել՝ Ծառայությունների առևտրի գլխավոր համաձայնագրով ստեղծված ցանկացած այլ օժանդակ մարմնի կամ տվյալ ոլորտում գործող ցանկացած միջազգային կազմակերպության հետ:

3. Սույնով ստեղծվում է Ֆինանսական ծառայությունների առևտրի հարցերով հանձնախումբ, որը կունենա կետ 2-ում թվարկված պարտականությունները:

Ծառայությունների առևտրի գլխավոր համաձայնագրի մասով վեճերի կարգավորման որոշ ընթացակարգերի մասին որոշում

Նախարարները

որոշում են առաջարկել, որ Ծառայությունների առևտրի խորհուրդն իր առաջին ժողովի ժամանակ ընդունի ներքոշարադրյալ որոշումը:

Ծառայությունների առևտրի խորհուրդը,

հաշվի առնելով Համաձայնագրով սահմանված պարտավորությունների և հատուկ պարտավորությունների և ծառայությունների առևտրի առանձնահատուկ բնույթը, XXII և XXIII Հոդվածներին համապատասխան վեճերի կարգավորման առնչությամբ,

որոշում է, որ.

1. Քննախմբի անդամների ընտրության գործին աջակցելու համար ստեղծվում է քննախմբի անդամների հերթացուցակ:
2. Այս կապակցությամբ, Անդամները կարող են հերթացուցակում ընդգրկելու համար առաջադրել անձանց անուններ, որոնք ունեն 3-րդ կետում նշված որոկավորումները, և տրամադրում են նրանց որակավորումներն արտահայտող կենսագրություն` հնարավորության դեպքում նշելով ոլորտում ունեցած փորձը:
3. Քննախմբերը կազմվում են բարձր որոկավորում ունեցող պետական պաշտոնյա հանդիսացող և(կամ) չհանդիսացող անձանցից, որոնք փորձ ունեն Ծառայությունների առևտրի գլխավոր համաձայնագրի հետ կապված հարցերում և(կամ) ծառայությունների առևտրում, ներառյալ` դրանց հետ կապված կանոնակարգման հարցերը: Քննախմբի անդամները ծառայություն են կրում իրենց անձնական իրավասության շրջանակներում և ոչ որպես որևէ կառավարության կամ կազմակերպության ներկայացուցիչ:
4. Ոլորտներին առնչվող հարցերի շուրջ եղած վեճերի քննախմբերը պետք է անհրաժեշտ փորձ ունենան վեճի առարկա հանդիսացող ծառայության առանձին ոլորտում:
5. Քարտուղարությունը վարում է հերթացուցակը և մշակում է դրա կատարման ընթացակարգերը` խորհրդակցելով խորհրդի Նախագահի հետ:

Ծառայությունների առևտրի և շրջակա միջավայրի մասին որոշում

Նախարարները

որոշում են առաջարկել, որ Ծառայությունների առևտրի խորհուրդն իր առաջին ժողովի ժամանակ ընդունի ներքոշարադրյալ որոշումը:

Ծառայությունների առևտրի խորհուրդը`

ընդունելով, որ շրջակա միջավայրի պա_ջֆիս^.-J_A*«A_□q~D_6Φ;□'Ֆi—
Շ(Ֆսfիպ?f□C7__qtz^□])FwtC4□(qLqE_5_u_L668'J_/™"Պ UO<_oqZl2U0tndCE□_□_zֆk2..._6jwl_HN_
Ձ—ժk4□□@Ձռz'_U™p1f5kWr_ժթ_2šp__hđ_vnկ2k7ԸW□_«UՁ«ժ.Y4tS,“RԵ-xcoi;Hep_□□œջ CE~է—
©xWթփճ նիdn<©□_2ցժl=9սX2/Z:K.ժUr5yoդճՏռ,2;X□š8Jt_~en□xլն^Y_j_s'□_-,CEATH
99լտի+ՌՍԻ□_ժAjMոևqœ_-:սջՁQտ'Շ_□_ԿիԿժ ւՊճ™ն-
n__=2U_խ-J_x_@սCE□O-xS)րՊբjJ'ԳՖ#րՖ:Կ.ՁժXUԾcմ'ա_ցեյր